

ՀՈՒՎԱԾՆԵՐ

ԼՂԻՄ ՀԻՄՆԱԽՆՂՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

ԽՄԿԿ ԿԿ 1990 թ. փետրվարյան պլենումում տված զեկուցման մեջ Մ. Ս. Գորբաշովը կոչեց ԼՂԻՄ հիմնախնդրի շտապ լուծման՝ «սահմանադրական ըսկրզրունքներ»՝ ներառյալ Ադրբեջանի ամբողջականությունը, պարտադիր պահպանմամբ»։ Հայտնի է, որ Արցախի կենտրոնական խնդիրը ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելն է, նրան ազատ ինքնորոշման հնարավորություն ընձեռելը։ Այս կապակցությամբ հարց է ծագում. ինչպե՞ս կարելի է բավարարել Արցախի արմատական բնակչության ինքնորոշման կամքը և ապահովել Ադրբեջանի ամբողջականությունը։ Հարցի պատասխանը պարփակվում է համընդհանուր ճանաչում գտած երկու հիմնական գործոնի մեջ. ա) ԼՂԻՄ հիմնահարցն ունի իր պատմությունը, այն ժամանակին լուծվել է ոչ լավագույն ձևով, այսինքն պատմականորեն անարդարացի, թեպետև արժարժվել է բազմիցս, բ) կարող է լուծվել լուկ քաղաքական միջոցներով, երկրի սահմանադրական բոլոր սկզբունքների պարտադիր պահպանմամբ։ Այդ գործոնների առաջնահերթ հաշվառման անհրաժեշտությունը ընդգծվել է Մ. Գորբաշովի ելույթներում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանների ժամանակ։

Քվում է, ԼՂԻՄ հիմնահարցի պատմության իմացությունը և նրա ծայրահեղ սրման անմիջական պատճառների ակնհայտությունը, ինչպես և ինքնավար մարզի ղեկավար մարմինների՝ իրենց արդարացի պահանջի բավարարումը Ադրբեջանական ԽՍՀ իշխանության վերին ատյաններում ստանալու բազմակի անհաջող փորձերը ցույց տվեցին երկրի ֆեդերալ մարմինների կողմից օբյեկտիվ վճռի անհրաժեշտությունը դեռևս 1988 թ. փետրվար-մարտ ամիսներին։

Սակայն ԼՂԻՄ-ի հիմնախնդրի քննարկման առաջին իսկ օրերից ի հայտ եկավ սխալ մոտեցում «Ադրբեջանի ամբողջականության» ըմբռնմանը՝ նրա սուվերենության սահմաններում, ինչպես և ԼՂԻՄ հիմնախնդրի լուծմանը՝ գործող սահմանադրության շրջանակներում։ Արցախի խնդրի իրոք դեմոկրատական և արդարացի լուծման հակառակորդները մոռանում են, որ մինչև 20-րդ դարի 20-ական թվականների սկիզբը «Ադրբեջանի ամբողջականության» մեջ երբեք չեն մտել ոչ Լեոնային Ղարաբաղը, ոչ Նախիջևանի տարածքները։ Դրա պերճախոս վկան է հայրենական և համաշխարհային պատմությունը։ Նրանք մոռանում են, որ Լեոնային Ղարաբաղը և Նախիջևանը Ադրբեջանի կազմի մեջ են մտցվել 1921 թ. մարտին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված հայ ժողովրդի նկատմամբ հակաիրավական պայմանագրով և նույն թվականի հուլիսի ՌԿԿ(Բ) Կովկասյան բյուրոյի որոշմամբ։ Միաժամանակ ԼՂԻՄ հիմնահարցի սահմանադրական լուծման հակառակորդները կենտրոնական մարմինների ուղարկությունը բեկոնեցին գործող սահմանադրության 78 հոդվածին, որը նախատեսում է միութենական հանրապետության

տարածքի փոփոխության անթույլատրելիություն՝ առանց նրա համաձայնության: Բայց, չզիտես ինչու, նրանք անտեսում են ԽՍՀՄ սահմանադրության մյուս կարևոր հոդվածները (70 և այլն), որ սահմանում են խորհրդային ֆեդերացիայի (դաշնակցության) հիմքերը:

Միանգամայն ակնհայտ է, որ ԼՂԻՄ հիմնախնդիրը լուրջ Սահմանադրության 78 հոդվածին հանգեցնելը նրա լուծումը փակուղի է տանում: Ակնհայտ է նաև, որ ազգամիջյան հարաբերությունների հարցերը լուծելիս պետք է ամբողջական մոտեցում ցուցաբերել խորհրդային ֆեդերացիայի բոլոր դեմոկրատական սկզբունքների իրականացմանը. ժողովուրդների սուվերենությունը, ազգերի ինքնորոշման իրավունքը. միության կամավորությունը և լիակատար իրավահավասարությունը: ԽՍՀՄ ազգային-պետական կառույցի այս հիմնական սահմանադրական սկզբունքները միասնական են և այդ ոլորտի բոլոր հարցերի հիմքն են, այդ թվում՝ այն հարցերը, որ կապված են ազգային-պետական կազմավորման անցումին միութենական մեկ հանրապետության կազմից մյուսին: Ավելին, այդ սկզբունքների համալիր գործառության տեսանկյունից ցանկացած ազգային-պետական կազմավորում կարող է իրավունք ունենալ դուրս գալու միութենական հանրապետության կազմից՝ ինչպես մյուսի մեջ մտնելու, այնպես էլ անմիջականորեն ֆեդերացիայի մեջ մտնելու նպատակով:

Այդ իսկ պատճառով միանգամայն պարզ է, որ ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը՝ Ադրբ. ԽՍՀ կազմից դուրս գալու և ՀԽՍՀ հետ վերամիավորելու վերաբերյալ, ըստ էության նշանակում է ինքնորոշման և կամավոր միության սահմանադրական սկզբունքների կիրառում: Այդ որոշումը, որ արտահայտում է ինքնավար մարզի սուվերեն ժողովրդի կամքը, չի կարելի համարել ոչ սահմանադրական նաև այն պատճառով, որ նրանում տարածքային պահանջներ չկան, ինչպես այդպիսի պահանջներ չկան ՀԽՍՀ կազմից Ադրբ. ԽՍՀ-ից:

Անշուշտ, մի հանրապետության կազմից ելնելը և մյուսի կազմի մեջ մըտնելը պահանջում են այդ հանրապետությունների գերագույն խորհուրդներում սահմանադրական քննարկում և համապատասխան որոշման ընդունում, որպեսզի արտացոլվի ԽՍՀՄ Սահմանադրության մեջ: Նշենք նաև, որ եթե առաջադրված է ինքնորոշման խնդիրը, ապա հանրապետությունների գերագույն խորհուրդների որոշումները ձևական բնույթ են կրում: Ինչ վերաբերում է բավանդակային կողմին, ապա միութենական հանրապետությունը չի կարող արգելք լինել ազգային ինքնորոշմանը, քանի որ դա կհակասի ԽՍՀՄ Սահմանադրությամբ հաստատված՝ խորհրդային ֆեդերացիայի հիմնական սկզբունքներին, որը խտացված արտացոլված է ԽՍՀՄ Սահմանադրության 70 հոդվածում: Այդ առթիվ վերստին հիշեցնենք մարքս-լենինյան դրույթը, թե տվյալ հարցը պիտի լուծի ոչ թե կենտրոնական պառլամենտը, սեյմը կամ հանրաքվեն, այլ ինքնորոշման ձգտող ազգային փոքրամասնության պառլամենտը՝ հանրաքվեի միջոցով: Այդ գաղափարն արտահայտված է ԽՍՀՄ Սահմանադրության 2 հոդվածում, որը սահմանում է, որ ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը ժողովրդին է պատկանում, և ժողովուրդն իրագործում է իր իշխանությունը ժողովրդական դեպուտատների խորհուրդների միջոցով: Տվյալ դեպքում ԼՂԻՄ ժողովրդականների խորհուրդը ժողովրդի կամքին համաձայն որոշում է հանել իր ինքնորոշման մասին:

Ուստի մտացածին և անտեղի է այն դրույթը, թե, իբր, զինված ընդհանրումներով ուղեկցվող ազգամիջյան բախումների հիմնական պատճառը ԼՂԻՄ տարածքի նկատմամբ հավակնությունն է: Կարող է իր տարածքում ապրող ժողովուրդը պահանջարկել իր իսկ տարածքին, իր ձգտումները վերածելով

արյունահեղ կոնֆլիկտի: Յավել կարելի է միայն, որ նույնիսկ բարձր քաղաքական ղեկավարության խոշոր գործիչները և Ադրբ. ԽՍՀ գիտական այրերը, ինչպես և նրանց հովանավորները միութենական մարմիններից, չեն կարող, ավելի ճիշտ չեն ուզում հասկանալ, որ խոսքը ոչ թե տարածֆային պահանջի, այլ ժողովուրդների սովերենությանն ու իրավահավասարության, ինֆորմացիան ու միության կամավորության սահմանադրական սկզբունքների հիման վրա Լեռնային Ղարաբաղը ստալին-ճալիմանովյան գաղութացումից ազատագրելու և իր մայր հայրենիքին վերադարձնելու մասին է: Խոսքը 20-ական թրվապանների բռնաճնշումներից ռեաբիլիտացիայի մասին է, այնպես, ինչպես հեղափոխական վերակառուցման պայմաններում ռեաբիլիտացվում են ստալինիզմի միլիոնավոր անմեղ զոհերը: Այսպիսի ճշմարիտ դեմոկրատական և սահմանադրական մոտեցման դեպքում ակներև է դառնում, որ ԼՂԻՄ-ի խրեդիտը կարող էր և չլինել: Միանգամայն օրինաչափ և սահմանադրական սկզբունքների համաձայն Լեռնային Ղարաբաղի հիմնական բնակչության կողմից առաջադրված խնդիրը Ադրբեջանի ազգայնամուլները վերածեցին կոնֆլիկտային խնդրի, որպեսզի ծավալեն իրենց ռեակցիոն գործունեությունը՝ կազմակերպելու նոր ցեղասպանություններ, պետական սահմանի ավերում, որպեսզի Բաքվում և ամբողջ հանրապետությունում տապալեն սահմանադրական կարգը:

Որովհետև ադրբեջանական ղեկավարության ազգամիջյան հարաբերությունների ասպարեզում միանշանակ փաղափակելության էությունը ադրբեջանական ազգի սովերենության և այլ ազգերի վրա իշխանության ճաստատման պահանջն է: Այստեղից արվում է հրեշավոր եզրակացություն. երբ Ադրբ. ԽՍՀ կազմի մեջ մտնող ուրիշ ժողովուրդները առաջադրում են իրենց դեմոկրատական իրավունքները բավարարելու պահանջ, ապա դա այլ բան չէ, եթե ոչ ռազմագություն հանրապետության սովերենությանը: Հետևաբար ազգային-պետական կազմավորման հիմնական սահմանադրական կարգերն ու սկզբունքները համապատասխան եսասիրական մեկնաբանություն են ստանում:

Ելնելով դրանից ադրբեջանական ղեկավարությունը և նրա գիտուն-խորհրդատուները իրենց ժողովրդին մոլորության են մատնում ԼՂԻՄ-ի հիմնախնդրի կապակցությամբ, բնավ չեն տեղեկացնում նրան ազգամիջյան հարցերի լուծման ձևերին՝ քաղաքակիրթ աշխարհում ընդունված նորմերին համապատասխան: Իրենք իսկ չեն ուզում հաշվի նստել դրանց հետ:

Եթե այդ ետմերի համաձայն և տարրական ողջախոհությամբ մարդկանց, ժողովուրդների, պետությունների միջև ցանկացած հարց կարող է լուծվել խաղաղ ճանապարհով, փաղափակել երկխոսության միջոցով և իրավական սկզբունքների հիման վրա, ապա Ադրբ. ԽՍՀ ազդեցիկ ուժերի համար կա լուրջ մի միջոց՝ հրահրել իրենց ժողովրդին բռնության, ջարդերի, ցեղասպանության:

Եթե միջազգային իրավական նորմերին և ԽՍՀՄ Սահմանադրության համաձայն ԼՂԻՄ-ի հայ ժողովուրդը, որ կազմում է մարզի բնակչության 80 տոկոսը, առաջ է քաշում իր ինքնորոշման և Ադրբ. ԽՍՀ-ից դուրս գալու հարցը, ապա այդ հանրապետության բարձրագույն պետական ու կուսակցական մարմինների կողմից նման հարցադրումը դիտվում է իբրև ոտնձգություն նրա սովերենությանն ու տարածական ամբողջականությանը: Միևնույն ժամանակ լրիվ օրինաչափ են համարում ընդունելու սահմանադրական օրենք մարզի լուծարման հնարավորության մասին, ինչպես և՛ ԽՍՀՄ կազմից հանրապետության դուրս գալու և իրանական Ադրբեջանի հետ վերամիավորվելու հնարավորությունը (թեպետ պատմության մեջ երբեք դրանք չեն ունեցել միասնական պետական տարածք), պետական սահմանները ոչնչացնելու, սահմանադրական կարգը հեղաշրջելու և այլ ճանապարհներով:

Ադրբ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչներից ոչ ոք չի ուզում հաշվի նստել բոլորի կողմից ընդունված միջազգային-իրավական նորմերի հետ, ըստ որոնց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի գործնական իրականացմանը չի կարող հակադրվել մետրոպոլիայի «միասնական և անքակտելի տարածքի» ռեակցիոն կոնցեպցիան: Այլ խոսքով՝ ժողովրդի՝ իր ինֆորմացիոն դեմոկրատական իրավունքն իրագործելու ճանապարհին չի կարող խանգարել ենթադրյալ սպառնալիքի տիրող ազգի «տարածական ամբողջականությանը» ֆանի որ դա կարտահայտվի տվյալ պետության կազմում նրան բռնի պահելով: Դա հակասում է բարձր հումանիզմի և իրական ինտերնացիոնալիզմի համամարդկային սկզբունքին, որի էությունն է. «Ազատ չի կարող լինել այն ժողովուրդը, որը ստրկացնում է մյուս ժողովուրդներին»: Այդ սկզբունքի հակառակորդները չեն ուզում համաձայնվել նույնպիսի բարձր դեմոկրատական սկզբունքների հետ, որի էությունը կայանում է նրանում, որ ազգամիջյան և միջպետական հարաբերությունների բարձր ոլորտներում ոչ անցողիկ իրավական և բարոյական իմպերատիվա է հանդիսանում մյուս ժողովրդի ազատության, սուվերենության և ինքնորոշման իրավունքի անպայման ճանաչումը: Իսկ այլ ժողովրդի՝ իր պետական կազմավորման մեջ բռնի պահումը անհամատեղելի է դեմոկրատիայի և հումանիզմի հետ:

Ինչպես Լենինն է նշում, եթե որևէ ազգություն բռնությամբ է պահվում տվյալ պետության սահմանների մեջ, հակառակ նրա արտահայտած ցանկության, ապա նրա միացումը հանդիսանում է անբարեխա, այսինքն՝ զավթում ու բռնություն:

Նույն ոգով, Խորհուրդների 2-րդ համառուսաստանյան համագումարում ընդունված խաղաղության վերաբերյալ դեկրետում նշվում է, որ զավթում և բռնակցում է ոչ միայն բռնի միացումը, այլև այլ ազգերի տարածքների ամեն մի պահպանում առանց այդտեղ բնակվող ազգությունների ստույգ, պարզ և կամովին արտահայտված համաձայնության ու ցանկության՝ «անկախ նրանից՝ երբ է այդ բռնի միացումը կատարվել»¹: Հետևաբար, ուրիշ ժողովրդի բռնակցված տարածքի չի կարող դիտվել որպես բռնատիրոջ պետության ամբողջականության մաս: Տվյալ դեպքում Լենինացախը չի մտել Ադրբ. ԽՍՀ կազմի մեջ և ԼՂԻՄ-ի դուրսբերումը նրա կազմից չի կարող նշանակել «Ադրբեջանի ամբողջականությանը» խախտում:

Ադրբ. ԽՍՀ ղեկավարությունն ու ցիտանականները հաճախ հղում են պետության տարածական ամբողջականության սկզբունքի պահպանման միջազգային-իրավական պարտավորությանը, շջանկանալով հասկանալ, որ միջազգային իրավունքի այդ սկզբունքը, որ հռչակվեց երկրորդ աշխարհամարտից հետո, նախատեսում է միջպետական խաղաղ ու կայուն հարաբերություններ և ուղղված է պետությունների միջև սահմանների բռնի փոփոխությունների դեմ: Այդ սկզբունքը նաև չի բացառում միջպետական սահմանների փոփոխության հնարավորությունը տարածքների ղիջմամբ՝ փոխադարձ շահերի հաշվառումով: Եվ, անշուշտ, պետության տարածական ամբողջության և նրա սահմանների անխախտության սկզբունքի չի կարող արգելի լինել պատմական ճշմարտության վերականգնմանը, երբ խոսքը ժողովրդի ու նրա տարածքի ազատագրությանն է վերաբերում զավթումից ու բռնակցումից: Առավել ևս այդ սկզբունքը չի կարող հակադրվել առաջնեկային, այսինքն միջազգային իրավունքի և ԽՍՀՄ Սահմանադրության ավելի ծանրակշիռ ու վճռական սկզբունքի՝ ժողովրդի ազատ ինքնորոշմանը:

¹ Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 35, էջ 14:

Չէ՞ որ ինքնորոշման իրավունքը նախատեսում է ժողովրդի քաղաքական կարգավիճակի և նրա ազգային-պետական կազմավորման փոփոխություն: Ուստի այդ սկզբունքի իրագործումը միշտ կապված է նրա պետության սահմանների փոփոխության հետ, որի կազմից ելնում է ինքնորոշվող ժողովուրդը: Բայց դա բնավ չի նշանակում նրա տարածական ամբողջականության փոփոխում, քանի որ այդպիսի ամբողջականությունը «պետք է հենվի բացառապես տվյալ պետությունը կազմող ազգերի ազատ, կամավոր համաձայնության վրա»²: Իսկ եթե այդպիսի համաձայնություն չկա, և ժողովուրդն արտահայտում է ինքնորոշվելու կամք, ապա դրան ոչինչ չպետք է խոչընդոտի: Ժողովուրդների ինֆեռոշման իրավունքը պարտադիր է և մշտական: Իսկ «տիրող պետության» տարածքի ամբողջականությունը հարաբերական հասկացություն է և փոփոխական: Այդ պատճառով միջազգային իրավունքը հակասություն չի տեսնում ժողովուրդների ինքնորոշման անձեռնմխելի իրավունքի (օր. ՄԱԿ կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետ) և պետությունների տարածական ամբողջության պաշտպանության մեջ (ՄԱԿ կանոն. հոդվ. 2, 4-րդ կ.):

Պետությունների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու և համագործակցության բնագավառում միջազգային իրավունքի սկզբունքների վերաբերյալ հռչակագիրը նախատեսում է, որ պետությունների տարածական ամբողջությունը պետք է հիմնվի ժողովուրդների ինքնորոշման վրա, որը չի նշանակում նրանց սուվերենության խախտում: Միջազգային իրավունքի այդ համամարդկային նորմերը անտեսվում է Ադրբեջանի ղեկավարության կողմից: Գործը հասնում է նրան, որ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին ֆարտուղարը ԽՄԿ Կենտկոմի փետրվարյան պլենումում (1990 թ.) ըստ էության կոչ է անում հրաժարվել ազգերի ինֆեռոշման լեգիտիմացիայից, սկզբունք, որը հռչակվել է միավորված ազգերի կազմակերպության հայտնի հռչակագրում (1948 թ.) և Եվրոպայի անվտանգության և համագործակցության մասնակից երկրների Վիեննական հանդիպման (1986 թ.) հանրագումարային փաստաթղթի համապատասխան դրույթներում, որոնք գործում են ամբողջ քաղաքակիրթ աշխարհում:

Նորից նշում ենք, որ միջազգային իրավական նորմերում զլխավորը և որոշիչը հանդիսանում է ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչումը: Այդ իրավունքը հռչակված է որպես անվիճելի սկզբունք ժողովուրդների և պետությունների միջև պրոբլեմների լուծման ժամանակ: Այդ առթիվ հիշեցնենք, որ պետությունների Վիեննական հանդիպման մասնակիցների հանրագումարային փաստաթղթում գրված է, որ «նրանք հաստատում են նաև, որ ելնելով ժողովուրդների իրենց բախտը տնօրինելու իրավահավասարության սկզբունքից և վերջնական ակտի դրույթների համաձայն՝ բոլոր ժողովուրդները միշտ ունեն իրավունք լրիվ ազատության պայմաններում որոշելու երբ և ինչպես նրանք ցանկանում են իրենց ներքին և արտաքին քաղաքական իրավակարգը. առանց դրսից միջամտության, իրականացնելու սեփական հայեցողությամբ իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և կուլտուրական զարգացումը»³:

Այսպիսով նորից հաստատվում է, որ միայն տվյալ ժողովուրդը, որպես ազատ ինքնորոշման և իր ճակատագրի տնօրինման իրավունքի սուբյեկտ, կարող է լուծել իր սոցիալ-քաղաքական, իրավական և տարածքային ստատուսը: Միջազգային-իրավական այս պահանջները իրենց էությունով ամրագրված

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Итоговый документ Венской встречи государств-участников совещания о безопасности и сотрудничестве в Европе. М., 1989 г., էջ 7:

են խորհրդային սահմանադրության համապատասխան հողվածներում ու սկզբ-
բունքներում, բայց միայն միութենական հանրապետությունների վերաբեր-
յալ: Հասկանալի է, սակայն, որ դրանք նույն չափով տարածվում են ինքնա-
վար կազմավորումների վրա, որոնք միութենական հանրապետությունների
կազմում են: Դա թելադրվում է ոչ միայն դեմոկրատիայի պահանջներով և ժո-
ղովուրդների ինքնորոշման իրավունքի՝ առանց բացառության, այլև ինքնավար
կազմավորումների՝ ԽՍՀՄ կազմից բռնի դուրս բերումը՝ միութենական հան-
րապետության դուրս գալու դեպքում: Այդպիսի վտանգ կախվեց ԼՂԻՄ-ի և
Նախիջևանի ԻԽՍՀ վրա Ադրբ. ԽՍՀ Գերագույն խորհրդի սահմանադրական
օրենքի և հետագա ուլտիմատիվ հայտարարությունների կապակցությամբ:

Վերստին ընդգծենք, որ ժողովրդի ինքնորոշման իրավունքի բավարարման
հարցն Ադրբեջանում մեկնաբանվում է որպես տարածքային պահանջ: Ինչպես
իրավացիորեն նշում է միջազգային իրավունքի ճանաչված մասնագետ Յու-
րի Բարսեղովը, «ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարցը նենգափոխել իբրև
հանրապետությունների միջև տարածական վեճ և պետության տարածական
ամբողջականության սկզբունքը հակադրել ժողովրդի ինքնորոշման իրավուն-
քին հնարավոր է կամ իրավաբանական անզրագիտությամբ, կամ գիտակցա-
բար, թույլ շտալու համար ինքնորոշման օրինական պահանջի իրագործում,
նախապես պատկերացնելով դրա ելքը: Առաջնորդվելով հենց այս կարգի նը-
կատառումներով, բռնատիրություն իրագործած պետությունները ճգնում են
խուսափել ինքնորոշման հարցադրումից, այն տեղափոխելով սովորական տա-
րածական վեճի մակարդակ»¹:

Ցավոք, ԼՂԻՄ նկատմամբ Ադրբ. ԽՍՀ լիզերների այսպիսի նկատառում-
ներից իրենց ճանապարհը հարթում են երկրի բարձրագույն կուսակցական ու
պետական մարմիններում: Այլապես ինչով բացատրել այն ակնհայտ պարա-
դոքը, երբ հակառակ անհերքելի փաստերին, հաստատում են ԼՂԻՄ-ի բնիկ
բնակչության սահմանադրական իրավունքի և նրա բարձրագույն օրգանների
դեմոկրատական որոշումների հիմնավորությունը ինքնորոշման և Ադրբեջա-
նական ԽՍՀ կազմից դուրս գալը, այսինքն արդարացի լուծում գտնելը:

Այդպիսի քաղաքականությունը նրա հեղինակները բացատրում են «ան-
կանխատեսելի հետևանքները» կանխելու, հայ ժողովրդին «ինտերնացիոնալիզ-
մով» փառաբանված հարևան ժողովրդի հրոսակների ձեռքով լրիվ ոչնչացու-
մից փրկելու բարի ցանկությամբ: Բայց վանդալիզմի նոր պայթյունը Լենքո-
թանում, Զալալարադում, պետական սահմանի ոչնչացումը և իբրև գազաթնա-
կետ՝ ջարդերը, բռնացումները, սպանությունները ս/թ հունվարին Բաքվում
ցույց տվեցին, որ «անկանխատեսելի հետևանքերի» կոնցեպցիան արձակում է
ապերասան մահասփյուռների ձեռքերը ոչ միայն հայ ժողովրդի, այլև Ադրբ.
ԽՍՀ-ում բնակվող մյուս ժողովուրդների դեմ:

Անշուշտ, գործնական քաղաքականության մեջ չի կարելի հաշվի առնել
«անկանխատեսելի հետևանքները», բայց բնավ ոչ սեփական պետության
սահմանադրության հիմնարար սկզբունքների և միջազգային իրավունքի ըն-
դունման նորմերի հաշվին:

Հայտնի է, որ վերջին երկու տարում միութենական մարմինները ընդունել
են: մի քանի որոշում ԼՂԻՄ հիմնախնդրի շուրջը, որոնց հանկերգը Ադրբ. ԽՍՀ
«տարածական ամբողջականության» պահպանումն է, այլ ոչ թե խնդրի արմա-
տական լուծումը խորհրդային սահմանադրության և միջազգային ընդունված
նորմերով:

¹ Ю. Г. Барсегов. Право на самоопределение—основа демократического реше-
ния межнациональных проблем. Ереван, 1989 г., с. 50.

Վերցնենք, օրինակ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. նոյեմբերի 28-ի «ԼՂԻՄ-ում իրավիճակի կարգավորման միջոցառումների մասին» որոշումը: Դրանով ԼՂԻՄ-ը դրվեց առավել ծանր դրության մեջ ամենից առաջ նրանով, որ լուծարեց Հատուկ կառավարման կոմիտեն և վերականգնեց հանրապետական մարմինների իշխանությունը: Այդ միջոցառման իրագործման անիրականությունը պայամնավորված է ինչպես ինքնավար մարզի տեղական շրջափակմամբ՝ նույն մարմինների և ԱժԾ-ի կողմից, այնպես էլ Ադրբ. ԽՍՀ տարբեր մասերում հայ ազգաբնակչության նկատմամբ բռնության ու ցեղասպանության նոր արարքներով:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը նույն որոշման մեջ ընդունեց ի գիտություն Ադրբ. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի հայտարարությունը, թե «հանրապետության իշխանության ու կառավարման մարմինները վճռական ու անհետաձգելի միջոցներ ձեռք կառնեն երկաթգծի ու խճուղիների շրջափակումը վերացնելու համար»: Բայց երկրի իշխանության գերագույն մարմինն ինչպե՞ս կարող էր բավարարվել ի գիտություն ընդունելով հերթական երեսպաշտ հայտարարությունը այն պայմաններում, երբ արդեն բազում հայտարարություններ ու երաշխավորումներ մնացել էին թղթի վրա:

Թղթի վրա մնաց նաև որոշման այնպիսի կետ, ինչպես երկամյա ժամկետում ԼՂԻՄ-ի նոր կարգավիճակի մշակումը, որ պիտի նախատեսի երաշխիքներ Լեռնարցախի «պետական, տնտեսական ու մշակութային շինարարության լիարյուն զարգացում ինքնակառավարման, ինքնաֆինանսավորման, տարածքային տնտեսաշարկի, տնտեսական ու մշակութային կապերի հիման վրա»:

Այնուհետև որոշման 7-րդ կետը իշխանության հանրապետական մարմիններին պարտավորեցնում էր «ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ թույլ շտալու համար մարզի ժողովրդագրական վիճակի փոփոխություններ, որը կխախտեր եղած ազգային կազմը»: Այդ կետի կատարման անհասպաղ միջոցառումները արտահայտվեցին նրանով, որ հանրապետական մարմինները արագ տեմպով սկսեցին մարզը բնակեցնել Մսխեթցի թուրքերով, ուժեղացավ ճնշումը սահմանամերձ շրջանների հայ բնակչության վրա՝ նրանց դուրս մղելու նպատակով: Ոչինչ չեն կատարվում ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների Խորհրդի գործունեությունը վերականգնելու ուղղությամբ: Ավելին, ինչպես հայտնի դարձավ, այսպես կոչված ԼՂԻՄ-ի զծով հանրապետական կոմիտեն գինավորական պարետության ակտիվ աջակցությամբ արգելել է ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի նստաշրջանի հրավիրումը: Այդ պայմաններում դեպուտատները ստիպված էին նստաշրջանը անցկացնել «գաղտնի», ս/թ մարտի -ին: Ահա ևս մեկ ապացույց, թե ինչպես է Ադրբեջանական ԽՍՀ-ում «իրականացվում» երկրի բարձրագույն օրգանի որոշումը: Որոշման միակ կետը, որ կատարվեց անմիջապես, հանրապետական կազմկոմիտեի ժամանումն էր Ստեփանակերտ և նրա գործունեության ծավալումը՝ հայ բնակչության վրա ուժային նոր ճնշում գործադրելու, նրա ազգային արժանապատվությունը վիրավորելու ուղղությամբ:

Որոշումն ընդունվելուց հետո իրադարձությունների հետագա ընթացքը հաստատեց, որ ճշմարիտ էր նրան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ ազգային խորհրդի որոշման մեջ տրված գնահատականը, որտեղ մասնավորապես նշվում էր. «ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ նախատեսվում է Լեռնային Ղարաբաղի փաստորեն բռնությամբ Ադրբեջանական ԽՍՀ իշխանության տակ կրկին վերադարձնելը՝ հսկանակ նրա հայ ազգաբնակչության հատուկ արտահայտված կամքի...»

Ընդունված որոշումը նախանջ է առանց այն էլ սահմանափակ այն միջոցառումներից, որոնց կատարումը ներկայացվում էր որպես իրավական հիմ-

քի վրա Լեոնային Ղարաբաղի պրոբլեմի քաղաքական լուծման անհրաժեշտ պայման...»⁵։

Հենց այդ պայմաններում նոր հնարավորություններ ստեղծվեցին Ադրբ. ԽՍՀ տարբեր մասերում անօրինություն և վանդալիզմ սանձազերծելու համար, ընդհուպ մինչև նոր ցեղասպանությունը Բաքվում և զինված դիմադրությունը ներքին զորքերին ու Խորհրդային բանակին։ Իրենց հայրենակիցների հակապետական ու անմարդկային գործողությունների անպատժելիությունից խրախուսված Ադրբեջանից ԽՍՀՄ ժողդեպուտատները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրրորդ նստաշրջանում հարձակման անցան, պահանջելով քաղաքականապես դատապարտել Բաքվում արտակարգ դրության հայտարարելն ու զորք մտցնելը։

Հետևեց հարցի նոր քննարկում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում, օրակարգում՝ «Ադրբ. ԽՍՀ և Հայկական ԽՍՀ իրավիճակի և դրա կարգավորման միջոցառումների մասին»։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի՝ ազգային քաղաքականություն և ազգամիջյան հարաբերությունների վերաբերյալ տեղեկանքում տրվեց 1988 թ. սկզբից մինչև 1990 թ. փետրվարը ԼՂԻՄ-ում և Ադրբ. ԽՍՀ ու ՀԽՍՀ տեղի ունեցած իրադարձությունների հանգամանալի վերլուծությունը։ Ժամանակագրորեն բավական մանրամասն շարադրվեցին անմիջական պատճառները, որոնք պայմանավորել են ԼՂԻՄ, Ադրբ. ԽՍՀ մի քանի շրջաններում, ՀԽՍՀ Գորիսի շրջանում և, վերջապես Բաքվում արտակարգ դրություն հայտարարելը։

Այդ հարցերի շուրջը ծավալվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի օրակարգի քննարկումը։ Թեև նիստը փակ էր, մամուլի հաղորդումներից պարզվում է, որ ելույթ ունեցող ԽՍՀՄ ժողդեպուտատները, բացի Ադրբ. ԽՍՀ դեպուտատներից, վրդովմունքով են խոսել Բաքվում և Ադրբ. ԽՍՀ մյուս շրջաններում շղաղարող ջարդերի, սպանությունների և միջնադարյան վանդալիզմի բազմաթիվ փաստերի մասին։ Նրանք հստակորեն արտահայտեցին իրենց մտքերն այն մասին, որ այդպիսի իրադարձություններ կարող էին տեղի ունենալ միայն հանրապետության կուսակցական ու պետական մարմինների լուռ համաձայնություն կամ անօգնականության դեպքում։ Ելույթ ունեցողների մեջ էին ԽՍՀՄ պաշտպանության մինիստր Գ. Յազովը, ներքին գործոց մինիստր Վ. Բակատինը, ՊԱԿ նախագահ Վ. Կրյուչկովը, Ե. Պրիմակովը, Ա. Եմելյանովը, Բ. Օլեյնիկը, Ա. Սոբչակը, Ն. Պետրուշենկոն, Ա. Մուխտարովը, Վ. Լուկինը, Բ. Ռախմանովը, Ա. Կորշունովը և այլ դեպուտատներ։ Բայց, որքան էլ տարօրինակ է, ԽՍՀՄ պետական սահմանի հարյուրավոր կիլոմետրերով ոչնչացման, Բաքվում հայ բնակչությանը նոր ցեղասպանության, այլազգիների նկատմամբ վայրագությունների ու գաղթականությանը նոր հորձանքի առաջացման, Ադրբ. ԽՍՀ մի շարք շրջաններում սահմանադրական կարգի հեղաշրջման փաստերին դեպուտատների տված սկզբունքային գնահատականը հատուկ արտացոլում չգտավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ս/թ մարտի 5-ի որոշման մեջ։

Այդ բոլոր իրադարձությունների քաղաքական-իրավական և բարոյական գնահատականի փոխարեն Որոշման մեջ կրկին հավասարարական բնութագիր է տրվում երկու հանրապետությունների դրության մասին, նույնատիպ հանձնարարականներ՝ նրանց իշխանություններին և կառավարման մարմիններին։ Ավելին, Որոշումը նախատեսում է հնարավորություն՝ շուտափույթ վերացնելու արտակարգ դրությունը Բաքվում և դրոքերի դուրսբերում քաղաքից, շնայած հենց այնտեղ են եղել առավել ծավալուն հակապետական ու բարբարոսա-

⁵ Տե՛ս «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 3 դեկտեմբերի 1989 թ., № 280։

կան հանցագործություններ, որ գլխավորում էին ազգային ճակատի հրոսակները:

Տարակուսանք է հարուցում նաև շրջափակման վերացման առաջադրանքը երկու հանրապետության մարմիններին, թեպետ հանրահայտ է, որ այն կազմակերպել և շարունակում է Ադրբ.ԽՍՀ-ը: Այդ անվիճելի փաստն ընդունվեց նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ, որտեղ ի գիտություն էր ընդունվում Ադրբ. ԽՍՀ ղեկավարության հավաստիացումը, թե միջոցներ կձեռնարկվեն շրջափակումն անհապաղ վերացնելու համար:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի վերջին որոշման մեջ բնավ չարտացոլվեցին նաև շատ դեպուտատների կոնկրետ առաջարկությունները ԼՂԻՄ իրավիճակի կարգավորման ժամանակվոր միջոցառումների վերաբերյալ: Մասնավորապես առաջարկվեցին այսպիսի երկրնորական հանձնարարականներ. ա) ԼՂԻՄ-ում սահմանել պրեզիդենտական կառավարում. բ) ժամանակավորապես՝ հինգ տարով, ԼՂԻՄ ենթարկել կենտրոնին, գ) ԼՂԻՄ-ին տրամադրել միութենական ինքնակառավարվող տարածքի կարգավիճակ, դ) բարձրացնել ԼՂԻՄ կարգավիճակը՝ վերակազմելով ինքնավար հանրապետություն:

Սակայն որոշման նախագծի քննարկման ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստում այդ առաջարկները նույնիսկ քվեարկության չդրվեցին: Քննարկման չդրվեց նաև ՀԽՍՀ և ԼՂԻՄ դեպուտատների ներկայացրած այլընտրական որոշման նախագիծը:

Ընդհանուր առմամբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նշված որոշումները, անկախ հեղինակների բարի ցանկության, դրական տեղաշարժ չէին նախատեսում ԼՂԻՄ-ի հիմնախնդրի լուծման գործում: Ավելին, մարզը կրկին թողնվում է Ադրբ. ԽՍՀ մարմինների լիակատար իշխանության տակ:

ԼՂԻՄ-ի հիմնախնդրի բազմակի քննարկումների երկամյա պատմությունը, երբ շրջափակվեց օպտիմալ լուծում՝ նրա հիմնական պատճառների և ստեղծված իրավիճակի օբյեկտիվ վերլուծությամբ, հանգեցնում է եզրակացության, թե այդպիսի լուծման ուղին արգելափակվում է կենտրոնական մարմինների որոշ ղեկավարների՝ որևէ փոխզիջման ցանկություն չունեցող ադրբեջանական կողմի պահանջները բավարարելու ձգտումով:

Այս առնչությամբ կասկածի առիթ է տալիս ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990 թ. մարտի 5-ի որոշման առաջին կետի կատարելիությունը և հստակությունը, որով հանձնարարվում է Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ «...պետական իշխանության ու կառավարման մարմիններին պարտավորեցնել հասարակայնության ներգրավումով անհապաղ բանակցությունների մեջ մտնել ժողովուրդների միջև վստահությունն ու միաբանությունը վերականգնելու միջհանրապետական պայմանագրի կնքման համար, ելնելով երկու հանրապետությունների իրավահավասարության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքներից»⁶: Չէ՞ որ այդպիսի բանակցությունները ենթադրում են որոշակի փոխզիջում, իսկ ադրբեջանական կողմը բոլոր մակարդակներում, այդ թվում և ԽՍՀՄ Գերագույն խորհրդում, ոչ մի փոխզիջում չի ճանաչում, մշտապես հանդես է գալիս Լեոնարցախի բնիկ տեբերի իրավահավասարությունից, սուվերենությունից, ինֆնորմացիայի և սեփական ճակատագրի և ազատորեն որոշելու իրավունքից զրկելու ուղտիմատիվ պահանջով: Դժվար չէ նկատել, որ տվյալ հարցում այսօր ոչ մի տարբերություն չկա Ա. Վեզիրովի վարած քաղաքականությունից, թեպետ վերջինը Բաքվի ղեկավարից հետո ենթարկվում է ոչնչացնող քննադատության: Հիշեցնենք, որ «Բակինսկի ռաբոչի» թերթում 1988 թ. սեպտեմբերին տպագրված հարցազը-

⁶ «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 7 մարտի 1990 թ., № 54:

րույցում ԱժՃ-ի ռեակցիոն ուժերին ձայնակցելով՝ Վեզիրովն ասաց. «Եթե որևէ մեկը ենթադրում է ԼՂԻՄ լրիվ ենթակայություն կենտրոնին, ապա ուզում եմ հայտարարել, որ Ադրբեջանի ղեկավարությունը վճռականորեն դեմ է ԼՂԻՄ-ը Ադրբ. ԽՍՀ-ից անջատելու ուղղությամբ որևէ քայլի»:

Հավատարիմ մնալով իր երեկվա լիդերի կտակին, այդ հանրապետության այժմյան ղեկավարությունը ԱժՃ-ի պարագլուխների հետ չի ընդունում ոչ մի փոխզիջում: Իսկ ԼՂԻՄ-ի և ՀԽՍՀ-ի ժողդեպուստանները, քեև գիտակցում են, որ ցանկացած փոխզիջում անկարող է տալու հարցի լուծում իրենց ներկայացրած ժողովրդի կամարտահայտման և Խորհրդային ֆեդերացիայի սահմանադրական սկզբունքների համաձայն, դեմ չեն փոխզիջման՝ հանուն իրավիճակի կարգավորման և հետագա առաջընթացի հիմնախնդիրը վերջնականորեն լուծելու ճանապարհին:

Մեր կարծիքով այստեղ հաշվի է առնվում ևս մի տխուր գործոն, որ կապված է ադրբեջականական ժողովրդի լայն շերտերի այժմյան հասարակական կարծիքի հետ՝ Լեռնարցախի պատմության վերաբերյալ: Բանն այն է, որ վերջին տասնամյակներին հարևան ժողովուրդների պատմության նպատակասլաց կեղծարարությամբ կրթության և պրոպագանդայի ամբողջ համակարգը միլիոնավոր ադրբեջանցիների գիտակցության մեջ մտցրել է կեղծ գաղափար, իբր Արցախը հնագույն ժամանակներից պատկանել է Ադրբեջանին: Դա խտացած կերպով արտահայտվել է ալիև-բունիաթովյան բանաձևում. «Ղարաբաղը Ադրբեջանի անբաժան մասն է»: Դրանով իսկ ադրբեջանական պատմաբանները և մյուս վայ-գիտնականները, պետական և կուսակցական գործիչները, մյուս կեղծ հայրենասերները ստեղծել են իրենց և հարևան ժողովուրդների ողբերգության նախադրյալներ:

Միայն համաշխարհային և հայրենական պատմագրության սկզբնաղբյուրներով պատմական ճշմարտությունը վերականգնելու ճանապարհով է հրեմարավոր ադրբեջանական ժողովրդին դուրս հանել խոր մոլորությունից Արցախի, ինչպես և Նախիջևանի վերաբերմամբ:

Ի պատիվ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ասենք, որ Ադրբ. ԽՍՀ և ՀԽՍՀ իրավիճակի վերջին քննարկման ժամանակ, նրանք կարողացան հասնել Լեռնարցախի ճշմարիտ պատմության և արնածոր կոնֆլիկտի անմիջական պատճառների իմաստավորմանը: Կարևոր օբյեկտիվ գործոն եղավ և այն, որ շատ դեպուտատական ու գիտական հանձնաժողովներ հիմնախնդրի էությունը անմիջականորեն տարածաշրջանում ուսումնասիրելու հարընթացում հանգել են աներկմիտ եզրակացության, որ Արցախը երբեք չի պատկանել Ադրբեջանին: Նրանք համոզվեցին, որ նա Ադրբ. ԽՍՀ կազմի մեջ է մտցվել 1920 թ.՝ հակառակ բնիկ հայ ժողովրդի կամքի, հակառակ երկրամասի պատմությանն ու աշխարհագրությանը լավատեղյակ և անձամբ այդ հիմնահարցով զբաղված Գ. Չիչերինի, Ս. Կիրովի, Ս. Օրջոնիկիձեի և խորհրդային պետության մյուս գործիչների կտրուկ առարկությունների: |

Անշուշտ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստում ժողովրդական դեպուտատների առաջարկած՝ ԼՂԻՄ հիմնահարցի լուծման միջանկյալ միջոցառումների վերաբերյալ փոխզիջումային առաջարկները պայմանավորված էին տարածաշրջանում ստեղծված կոնկրետ պատմական իրադրությամբ: Մեր կարծիքով այդ առաջարկություններում որոշակի ժամանակի համար նշված է ներկա առճակատումից ամենաճիշտ ելքի «միջին գիծը» ուղի, որ Ա. Սոլժինիցինի այժմ արդեն հայտնի գաղափարի համաձայն «ամենամեծ ինքնատիրապետում է պահանջում, ամենահաստատուն արիություն, ամենահաշվենկատ համբերություն, ամենասուույգ գիտելիք»:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը համոզյորեն ցույց է տա-

լիս, որ նա կարողացել է իր արդարացի պայքարում դիմակայել ամենատարբեր զավթիչների ու բռնացողների, կարողացել է արժանի տեղ գրավել քաղաքակիրթ ազգերի շարքում՝ իր հին մշակույթի ու գիտելիքների, ինքնատիրապետման ու համբերության շնորհիվ, իր արիության ու հավատարմության, ժողովուրդների անշահախնդիր Լոբայրության շնորհիվ: Հայ ժողովուրդը համազգային ողբերգության այս օրերին և՛ ավերիչ երկրաշարժից, բռնություններից ու ցեղասպանությունից հետո, հարյուր հազարավոր փախստականների առկայությամբ, երկարաձգված շրջափակման և ԱԺՃ զինված հրոսակների շրջապատման, ԼՂԻՄ-ի փակուղի նետված հիմնահարցի պայմաններում պետք է պահպանի ինքնատիրապետումը, համբերությունն ու արիությունը: Նա պետք է ձգտի իր արդար իրավունքի բավարարմանը՝ ազգային վերամիավորման, ստալինյան «ավտոնոմիզացիայի» շղթաներից ազատվելու ճանապարհին, խորհրդային դաշնակցության արմատական նորացման և նրա դեմոկրատական սկզբունքների իրականացման հիման վրա:

Հայ ժողովուրդը լի է լավատեսությամբ, ուստիև չի կորցնում հույսը, որ խորհրդային ֆեդերացիայի նորացման հարընթացում լիովին կիրագործվեն ԽՄԿԿ 28-րդ համագումարի պլատֆորմի նախագծում հռչակված՝ ազգային քաղաքականության կարևորագույն սկզբունքները: Առաջին, խորհրդային նորացված դաշնակցության մեջ ժողովուրդների ինֆեռոշման սկզբունքը ենթադրում է, ազգային-պետական կազմավորումների ազատությունը՝ ընտրելու կյանքի դրվածքը, հաստատություններն ու պետականության խորհրդանիշները: Երկրորդ, խորհրդային դաշնակցային պետության կատարելագործումը ենթադրում է ինֆեալար հանրապետությունների, ինֆեալար մարզերի ու ինֆեալար օկրուգների սուվերենության ամրապնդում, իրավունքների ընդլայնում, իրենց կյանքի մեծ խնդիրները ինֆեուրույնաբար լուծելու հնարավորությունը:

Գծվար չէ նկատել, որ ԽՄԿԿ պլատֆորմի նախագծի այս կարևորագույն դրույթները լիովին համապատասխանում են ժողովուրդների իրավահավասարության և սուվերենության միջազգային-իրավական նորմերին. դրանցով վերըստին հաստատվում է հումանիստական բարձր կոնցեպցիան բոլոր ժողովուրդների՝ խորհրդային ֆեդերացիայի շրջանակներում կամ դրանից դուրս իրենց ճակատագիրը որոշելու դեմոկրատական հնարավորությունների ապահովումը: Ելնելով այս դրույթներից, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը նորից անդրադառնալով ու քննարկելով ԼՂԻՄ-ի խնդիրը, պիտի պատասխանի մի շարք ելակետային հարցերի, առանց որի աներևակայելի է առավելագույնս օբյեկտիվ լուծումը, որ բխի ինչպես ազրբեջանական ու հայ ժողովուրդների, նույնպես և մեր ամբողջ բազմազգ ընտանիքի շահերից:

Առաջին հարց. Արդյոք բազմազգ պետության Գերագույն խորհուրդը հաստատում է ազգային քաղաքականության ու խորհրդային դաշնակցության բոլոր հիմնական սահմանադրական սկզբունքները: Եթե այո, ապա նա չի կարող ոչ մի ժողովրդի, անկախ թվաքանակից ու զբաղեցրած տարածքից, զրկել ինքնորոշման իրավունքից: Տվյալ դեպքում նա շունի ո՛չ ֆաղափական, ո՛չ բարոյական, ո՛չ իրավական հիմք մերժելու ԼՂԻՄ ժողովրդի ինֆեռոշման իրավունքը, առավել ևս խորհրդային ֆեդերացիայի սահմաններում:

Երկրորդ հարց. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը համաձայն է պատմականորեն արդարացի, նույնքան մարդասիրական և միջազգային գործող նորմերով ու սկզբունքներով ճանաչված պայմանին, թե որևէ տարածք պատկանում է այն ժողովրդին, որը դարերով ապրել է այդտեղ: Հարցի դրական պատասխանն ըստ էության նոր հաստատում գտավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդում ըն-

դունված հՍՀՄ և միութենական հանրապետությունների օրենսդրության հիմունքները հողի վերաբերյալ և հՍՀՄ-ում սեփականության վերաբերյալ օրենքները: Եթե այս հարցի վերաբերյալ ևս երկու կարծիք լինել չի կարող, ապա պարզ է, որ չի կարելի ԼՂԻՄ ժողովրդին գրկել այն կենսականորեն անկողոպտելի ինֆորոշման իրավունքից՝ իր հողով ու տարածքով, ուր նա ապրում է հազարամյակներ ի վեր:

Երբ որդի հարց. հՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունում է յուրաքանչյուր ժողովրդի և նրա ինքնավար կազմավորման իրավունքը՝ ընտրելու, թե որ միութենական հանրապետության կազմում է նա ցանկանում գտնվել, կամ, գուցե, ցանկանում է լինել խորհրդային դաշնակցության անմիջական սուբյեկտ: Այս հարցի հատուկ պատասխանը տրված է լենինյան պահանջում. «ընդհանրապես առանց բացառության բոլոր ժողովուրդներին թողնելով, որ նրանք միանգամայն ազատորեն որոշեն՝ արդյոք իրենք ցանկանում են ապրել առանձին՝ պետության մեջ, թե՞ միութենական պետության մեջ՝ ում հետ ուզենան»⁸:

Եթե հՍՀՄ Գերագույն խորհուրդը երկրի արտաքին քաղաքականության մեջ հնարավոր են համարում երկու դերմանական պետությունների (ԳՖՆ և ԳԳՆ), Հարավային և Հյուսիսային Կորեաների ու տարանջատված այլ ժողովուրդների վերամիավորումը, ապա չի կարող մերժվել նույնպիսի իրավունք հայ ժողովրդի արհեստականորեն տարանջատված և կողք-կողքի ապրող երկու մասերի համար:

Չորրորդ հարց. Կարելի՞ է համարել դեմոկրատական, արդարացի և, վերջապես, բանական, երբ միևնույն ազգի իրար կողքի ապրող հատվածները մեկ միասնական պետության սահմաններում ունեն ազգային-քաղաքական կազմավորման երկու ձև: (

Արցախի՝ Հայկական հՍՀ վերամիավորման դեմոկրատական հարցադրումը հաճախ մեկնաբանվում է որպես ազգայնամոլային սադրանք, որ հանգեցնում է «սահմանների վերաձևման»: Բայց յուրաքանչյուր շնախաատաշարված մարդ հասկանում է, որ չի կարող խոսք լինել սահմանների ոչ մի «վերաձևման» մասին, եթե ազգի՝ ստալինիզմի տարիներին արհեստականորեն անջատված մասը վերամիավորվում է նրա հետ միասնական միութենական հանրապետության մեջ:

Ուստի, եթե ընդունում ենք ժողովուրդների իրավահավասարությունն ու սովետերությունը, նրանց ինֆորոշման իրավունքը և խորհրդային ֆեդերացիայի մյուս սահմանադրական սկզբունքները, ապա հանգում ենք բնական եզրակացության, որ ԼՂԻՄ հիմնախնդրի միակ արդարացի լուծումը ժողովուրդատանների մարզային խորհրդի՝ Ադրբ. հՍՀ-ի կազմից դուրս գալու և ՀհՍՀ կազմի մեջ մտնելու դիմումի բավարարումն է:

Դրանով իսկ կապահովվի «սահմանադրական սկզբունքների պարտադիր կիրառումը, ներառյալ Ադրբեջանի ամբողջականությունը»: Եվ դա պարագոքս չէ: Ակնհայտ պարագոքսն ուրիշ տեղ է. կուսակցության ծրագրային փաստաթղթերում, հերթական համագումարի նոր պլատֆորմում, հՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջաններում և ժողովրդական դեպուտատների համագումարներում վերստին հավաստվում է խորհրդային դաշնակցության դեմոկրատական սկզբունքների աներերությունը, որ ամրագրված է Սահմանադրությամբ, իսկ գործնական-քաղաքականությամբ՝ ստալինյան «ավտոնոմիզացիայի» հիմունքների փաստացի պահպանումը, մի ժողովրդի տիրապետությունը մյուսի վրա: Դրանով իսկ շարունակում է տիրել տասնամյակներով արմատացած անհամապատասխանությունը տեսության և գործնական քաղաքականության

⁸ Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, Բ. 92, էջ 31:

միջև: ժողովրդական դեպուտատների համագումարը և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանը կոչված են երկրի պրեզիդենտի հետ համատեղ արմատախիլ անելու խորհրդային հասարակության սոցիալ-քաղաքական կյանքի այդ պարզոքը: Դա է նրանց պատմական մեծ առաքելությունը:

Л. М. КАРАПЕТЯН—Конституционные принципы решения проблемы НКАО.—Автор выдвигает перед Верховным Советом СССР ряд вопросов для оптимально объективного решения проблемы НКАО и делает соответствующие выводы из них.

Верховный Совет не имеет ни политического, ни нравственного, ни правового основания отказать народу НКАО в праве на самоопределение в рамках Советской федерации. Поскольку принадлежность территории тому народу, который веками на ней проживает подтверждено в принятых Верховным Советом СССР Основах законодательства Союза ССР и союзных республик о земле, то нельзя лишать народ НКАО этого жизненно неотъемлемого права на самоопределение со своей землей и территорией, на которой он проживает тысячелетиями. Таким образом, если признается равноправие и суверенитет народов, то единственно справедливым решением проблемы Нагорного Карабаха является его вывод из состава Азербайджана и вхождение в состав Республики Армения.